

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԸ ՀԱՅ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Բանալի բառեր – Խորհրդային Ռուսաստան, Հայաստանի խորհրդայնացում, Հայկեղկոմ, Երևանի համաձայնագիր, խորհրդային իշխանություն, խորհրդա-քեմալական մերձեցում, պատմագրություն

1920 թ. սկզբներին Խորհրդային Ռուսաստանում գերիշխող դարձավ այն տեսակետը, որ ժամանակն է խորհրդայնացնելու Անդրկովկասը: Երկրամասի խորհրդայնացման գործընթացը սկսվեց Ադրբեջանից: Դեռևս ապրիլի 26-ին Մուստաֆա Քեմալը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի անունից մի նամակ էր հղել Վ. Լենինին, որից պարզվում էր, որ Թուրքիան պարտավորություն էր ստանձնել «հարկադրել Ադրբեջանական Հանրապետությանը՝ ընդգրկվելու խորհրդային պետությունների շրջանակում»¹: Հաջորդ օրն Ադրբեջանի խորհրդարանն ընդունեց իշխանությունը բոլշևիկներին հանձնելու մասին որոշում, իսկ ապրիլի 28-ին գրեթե առանց կրակոցի Ադրբեջանը խորհրդայնացվեց: Այս հանգամանքը մեծ ոգևորություն է առաջացնում հայ բոլշևիկների մոտ, որոնք ձեռնամուխ են լինում մայիսյան ապստամբության կազմակերպմանը: Նրանց նպատակն էր Հայաստանը ևս խորհրդայնացնել, սակայն այդ ապստամբությունը ճնշվեց, և դրանով իսկ կանխվեց Հայաստանի խորհրդայնացման առաջին փորձը: Հարկ է նշել, որ մայիսյան ապստամբության օրերին խորհրդային կառավարությունը և ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովբյուրոն օրակարգում չունեին Հայաստանի խորհրդայնացման հարցը: Կովբյուրոյի կարծիքով՝ Հայաստանի «խաղաղ» խորհրդայնացման համար պահը դեռ չէր հասունացել:

Ելնելով խորհրդա-քեմալական իրական շփման անհրաժեշտությունից՝ Հայաստանի խորհրդայնացման հարցը ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն քննարկեց միայն 1920 թ. հուլիսի վերջին: Այսպես, հուլիսի 30-ին Խորհրդային Ռուսաստանի Արտաքին գործերի ժողկոմ Գեորգի Չիչերինը ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյին ուղղված գրության մեջ նշում էր, որ Հայաստանի խորհրդայնացումը խիստ անհրաժեշտ է, քանի որ Խորհրդային Ռուսաստանը չունի սահմանային շփում Թուրքիայի հետ: Նրա այս առաջարկը քննարկ-

¹ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Ред. и сост. профессор Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, Москва, 2003, с. 51.

վեց և ընդունվեց հաջորդ օրը կայացած Քաղբյուրոյի նիստում¹: Սակայն այդ որոշումը գործնական նշանակություն չունեցավ, քանի որ 1920 թ. օգոստոսին միջազգային իրադրության սրընթաց փոփոխման պատճառով այն ակամայից չեղարկվեց: Խորհրդային Ռուսաստանը Հայաստանի խորհրդայնացման հարցը հետաձգեց՝ պատճառաբանելով, որ դեռևս շարունակվում է քաղաքացիական պատերազմը Խորհրդային Ռուսաստանում: Քանի դեռ Վրանգելը պարտություն չէր կրել, Խորհրդային Ռուսաստանը չէր ցանկանում ձեռնարկել Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը, այլ պարզապես ցանկանում էր ժամանակ շահել և շոշափել այդ պետությունների տրամադրությունները: Փաստորեն, այս ընթացքում Հայաստանի խորհրդայնացումը դիտվում էր որպես «միջանկյալ խնդիր»:

Խորհրդա-քեմալական մերձեցումն առավել ամրապնդվեց թուրք-հայկական պատերազմի նախաշեմին՝ 1920 թ. սեպտեմբերի սկզբին Բաքվում գումարված Արևելքի ժողովուրդների համագումարում, որը Հայաստանի համար ճակատագրական էր, քանզի դա դարձավ նախապատրաստական փուլ Հայաստանը վերացնելու ճանապարհին²: Արևելքի ժողովուրդների համագումարին մասնակցում էին հիմնականում մուսուլմանական 26 երկրներից եկած 1891 պատգամավորներ³, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում նաև հայ բոլշևիկները: Համագումարը, որը բացեց Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովը, ընդունած բոլոր փաստաթղթերում նշում էր, որ Հայաստանը միջազգային իմպերիալիզմի դաշնակիցն է և պետք է պարտության մատնել նրան⁴, իսկ Թուրքիայի առումով ընդունվեց հետևյալ ձևակերպումը. «Համագումարն իր համակրանքն է հայտնում թուրք բոլոր մարտիկներին, որոնք պայքարում են համաշխարհային կայսերապաշտության դեմ»⁵: Արևելքի ժողովուրդների համագումարի բուն նպատակն էր համոզել «Արևելքի ճնշված և հարստահարված ժողովուրդներին», որ իրենց երջանկության խաթարողը «իմպերիալիզմի դաշնակից Հայաստանն է»⁶:

Հարկ է նշել, որ Հայաստանի դեմ ուղղված այս գործընթացում իրենց ներդրումն են ունեցել հայ բոլշևիկները: Համագումարի ավարտից հետո նույն համագումարում ընտրված Արևելքի ժողովուրդների քարոզչության և գործողության խորհրդը մշակեց և սեպտեմբերի 17-ին կոմիստերնի գործադիր կոմիտեի նախագահությանը, ՌԿ(Բ)Կ Կենտկոմին և Խորհրդային Ռու-

¹ Տե՛ս Գеноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, с. 110-112:

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 մարտի 1991:

³ Տե՛ս **Հարությունյան Ա. (Հարենց)**, Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը, Երևան, 1960, էջ 9:

⁴ Տե՛ս **Սարգսյան Կ.**, Համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում // «Գարուն», 1990, թիվ 4, էջ 19:

⁵ «Կոմունիստ», 1920, սեպտեմբեր 13, թիվ 95:

⁶ **Սարգսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 18:

ասատանի Արտաքին գործերի ժողովուն ուղարկվեց «Մերձավոր Արևելքի քաղաքական ներկա մոմենտի մասին» եզրակացությունը, որտեղ ներկայացված էր Հայաստանի վրա հարձակման ծրագիրը¹:

Այս գրությունը Մոսկվա ուղարկելուց ընդամենը երեք օր անց՝ սեպտեմբերի 20-ին, Բաքվում գտնվող Հայաստանի կոմկուսի կենտկոմի անդամների ստորագրությամբ ընդունվեց հայ բոլշևիկներին ուղղված հույժ գաղտնի որոշում, ըստ որի՝ սկսվող թուրք-հայկական պատերազմում հարկավոր էր ամեն գնով կազմալուծել հայկական բանակը, արագացնել Հայաստանի պարտությունը, որը կխթաներ խորհրդայնացման գործընթացը: Որոշման վերջում նշվում էր. «Գրությունը կարդալ սահմանափակ ժողովում և կարդալուց հետո անմիջապես այրել»²:

Այս նույն ժամանակահատվածում բռնկված թուրք-հայկական պատերազմում քեմալական զորքերը ծանր պարտության մատնեցին Հայաստանին: Նրանց այս հաղթանակում որոշակի դերակատարություն ունեցավ Խորհրդային Ռուսաստանը, որը դիվանագիտական, ռազմական ու ֆինանսական աջակցություն էր ցուցաբերում քեմալականներին³: Արդյունքում Հայաստանը պարտվեց և ուժի սպառնալիքով ու պարտադրանքով ստորագրեց Ալեքսանդրապոլի չարաքաստիկ պայմանագիրը:

1920 թ. նոյեմբերին պատերազմում պարտված Հայաստանի համար չափազանց ծանր իրավիճակ էր ստեղծվել: Իսկապես երկիրը հայտնվել էր սալի ու մանգաղի միջև. մի կողմից քեմալականներն էին սպառնում, մյուս կողմից՝ բոլշևիկները: Այլընտրանքի բացակայության պայմաններում երկրի միակ փրկությունը խորհրդայնացումն էր, իշխանության խաղաղ փոխանցումը բոլշևիկներին, որը տեղի ունեցավ դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված Դրո-Լեգրան համաձայնագրով:

Ընդհանրապես խորհրդահայ պատմագրության մեջ ընդունված էր Հայաստանի խորհրդայնացման օր համարել նոյեմբերի 29-ը, երբ ռազմահեղափոխական կոմիտեն Հայաստանը հայտարարեց խորհրդային⁴: Դա, մեր կարծիքով, ճիշտ չէ, որովհետև օրինական իշխանափոխությունը Հայաստանում տեղի էր ունեցել ոչ թե նոյեմբերի 29-ին, այլ դեկտեմբերի 2-ին: Խորհրդահայ պատմաբանները չէին ընդունում սփյուռքահայ հեղինակների այն իրավացի տեսակետը, որ Հայաստանը խորհրդայնացել էր խաղաղ ճանապարհով, առանց որևէ հեղափոխության կամ դիմադրության հանդիպե-

¹ Տե՛ս **Մարդարյան Կ.**, նշվ. աշխ., էջ 19:

² «Հայաստանի Հանրապետություն», 19 մարտի 1991:

³ Տե՛ս **Մինասեան Բ.**, Հայաստան, հայ ժողովուրդ և հայ դատ, Պէյրուք, 1976, էջ 127, **Հակոբյան Ա.**, Բոլշևիկների օգնությունը քեմալականներին 1920 թ. // «Դրօշակ», 2000, թիվ 1, էջ 154-164:

⁴ Տե՛ս Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении. (Сборник документов), Ереван, 1957, с. 430-431:

լու, առանց մի կաթիլ արյուն թափելու¹: Հարկ է նշել, որ վերոնշյալ տեսակետը ժամանակին հաստատել է նաև Հայիեդկոմի անդամ Ավիս Նուրիջանյանը՝ հայտնելով Մերգո Օրջոնիկիձեին, որ «Քարվանսարան գրավվեց առանց մի գնդակ արձակելու»²:

Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը նոյեմբերի 29-ը համարում էր դաշնակցական կառավարության տապալման և երկրում խորհրդային իշխանություն հռչակելու օր³: Նա Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը համարում էր «արժեքից զուրկ մի գրություն»՝ նշելով, որ այն ստորագրվել է Հայաստանի խորհրդային անկախ հանրապետության գործերի նկատմամբ որևէ լիազորություն չունեցող «կոնտրադենտների» կողմից: Հեղինակն իր աշխատության մեջ զարգացնում էր այն թեզը, որ Հայաստանի ռազմիեղկոմը, երկրի անկախության սկզբունքը հարգելով, առ ոչինչ համարեց դեկտեմբերի 2-ի ակտը⁴:

Խորհրդահայ հեղինակ Արտաշես Կարինյանը ևս կարծում էր, որ Հայաստանը խորհրդայնացել է նոյեմբերի 29-ին: Նա այդ օրը համարում էր «նոյեմբերյան ապստամբության» բարձրագույն էտապ⁵, իսկ Երևանում Լեգրանի հետ բանակցությունները բնորոշում իբրև «դաշնակցական նորաձև դիվերսիայի մշակում»⁶: Հայաստանի օրինական կառավարությունը նա համարում էր նոյեմբերի 29-ին դաշնակցական կառավարության տապալվելուց հետո ստեղծված խորհրդային կառավարությունը:

Հարկ է նշել, որ խորհրդային շրջանի մյուս հեղինակները նույնպես վերոնշյալ պատմաբանների նման Հայաստանի խորհրդայնացման օրը համարել են նոյեմբերի 29-ը, նշել, որ այդ օրն առավոտյան «Քարվանսարայի և Շամշադինի աշխատավորները Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ ապստամբություն են բարձրացնում դաշնակցական ավանտյուրիստական կառավարության դեմ»⁷:

¹ Տե՛ս **Վրացյան Ա.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 535, **Քաջագունի Հ.**, ՀՅ Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, 1994, էջ 45, **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետության ծագումը եւ զարգացումը, Պէրութ, 1968, էջ 318, **Իրազեկ Յ.**, Մեր պատմության ամենատխուր էջը // «Դրօշակ», 1930, թիվ 10, էջ 241:

² **Ալիխանյան Ս.**, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921), Երևան, 1964, էջ 188, *նույնի՝* Գ. Կ. Օրջոնիկիձեև և Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1974, էջ 45:

³ Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Համագգային կրիզիսը (Նոյեմբերյան հեղափոխության հինգերորդ տարեդարձի առթիվ), Երևան, 1926, էջ 23:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 26:

⁵ Տե՛ս **Կարինյան Ա.**, Դաշնակցությունը և իր «զինակիցները», Երևան, 1932, էջ 86:

⁶ **Կարինյան Ա.**, Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926, էջ 42:

⁷ Տե՛ս **Ադայան Օ.**, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Երևան, 1957, էջ 311-312, *նույնի՝* Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1982, էջ 337-338, **Ղարիբջանյան Գ.**, Պայքարը Սովետական իշխանության հաղթանակի

Ինչ վերաբերում է դեկտեմբերի 2-ին դաշնակցականների կողմից իշխանությունը կամովին բռնազրկելուն հանձնելու հանգամանքին, ապա խորհրդահայ պատմաբան Բենիկ Օհանջանյանը դա համարում է սխալ, հակապատմական թեզ, որը, ըստ նրա՝ առաջ են քաշել դաշնակցականները, որպեսզի նսեմացնեն կամ ուղղակի անտեսեն նոյեմբերի 29-ի պատմական նշանակությունը¹:

Այսպիսով, խորհրդահայ պատմաբանները չէին ընդունում Երևանի համաձայնագիրը և Հայաստանի խորհրդայնացման գործընթացը ցանկանում էին ամբողջությամբ վերագրել Հայիեդկոմին, ինչն անընդունելի է, քանի որ օրինական իշխանությունը դաշնակցական կառավարությունը բռնազրկելուն հանձնեց դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված հայ-ռուսական համաձայնագրով, իսկ նոյեմբերի 29-ին պարզապես Հայիեդկոմը մտավ Իջևան և հայտարարեց Հայաստանի խորհրդայնացման մասին: Սա ընդամենը հայտարարություն էր, ուրիշ ոչինչ:

Համեմատության համար նշենք, որ նման մեկ այլ հայտարարություն եղել էր նոյեմբերի 17-ին Ալեքսանդրապոլում թուրքերի աջակցությամբ կազմված մեկ ուրիշ շեդկոմի կողմից, որի նպատակը, ըստ խորհրդահայ պատմագրության մեջ շրջանառվող տեսակետի, մինչև Հայաստանի խորհրդայնանալը ոչ միայն Ալեքսանդրապոլի, այլև Հայաստանի հեղափոխական կոմիտե դառնալն էր²: Նման մի հայտարարություն եղել էր ավելի վաղ՝ մայիսի 10-ին, դարձյալ Ալեքսանդրապոլում, երբ բռնազրկված զենքի ուժով գրավել էին քաղաքը³, իսկ ՌՀԿ-ն հրապարակել էր կոչ՝ Հայաստանում խորհրդային իշխանություն հռչակելու մասին՝ միաժամանակ հայտարարելով, որ «շուտով քաղաք պիտի մտնի Կարմիր բանակը, ապահովելով քաղաքացիների կյանքն ու գույքը, թե՛ արտաքին և թե՛ ներքին թշնամիներից»⁴: Սակայն մայիսի 10-ին «հաղթանակած» ապստամբությունը նույն ամսի 14-ին պարտվեց⁵: Կառավարական ուժերը Սեպուհի գլխավորությամբ ստիպեցին ապստամբներին անձնատուր լինել:

Վերոնշյալից պարզ երևում է, որ Հայիեդկոմը, նոյեմբերի 29-ին մտնելով Իջևան, լրկ հայտարարեց Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու մասին, մինչդեռ գլխավոր իրադարձությունների կենտրոնը Երևանն էր, որտեղ բանակցություններ էին ընթանում Խորհրդային Ռուսաստանի ներկա-

համար Հայաստանում (1917-1921 թթ.), Երևան, 1953, էջ 38-39, *նույնի՝* Ալեքսանդրապոլի բռնազրկման կազմակերպությունը 1917-1920 թթ., Երևան, 1953, էջ 147-148:

¹ Տե՛ս **Օհանջանյան Բ.**, Դաշնակցությունն առանց դիմակի, Երևան, 1980, էջ 188-189:

² Տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու 1920 նոյեմբեր – 1922 հունվար), Երևան, 1974, էջ 10:

³ Տե՛ս Մեծ հոկտեմբերի ուղիով (հոդվածների ժողովածու), Երևան, 1977, էջ 163:

⁴ Ռևոլյուցիոն կոչեր և թուրքիկներ 1902-1921, Երևան, 1960, էջ 548:

⁵ Տե՛ս **Ղարիբջանյան Բ.**, Սովետական իշխանության համար մղված պայքարում, Երևան, 1966, էջ 17-18:

յացուցիչ Բ. Լեգրանի և Հայաստանի Հանրապետության վարչապետ Ս. Վրացյանի կառավարության միջև, որի արդյունքում ստորագրվեց իշխանությունը խաղաղ ձևով բոլշևիկներին հանձնելու վերաբերյալ համաձայնագիրը:

Ի դեպ, Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը ժողովրդի հիշողությունից ջնջելու և խորհրդայնացման գործընթացն ամբողջությամբ Հայիեղկոմին վերագրելու նպատակով Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը 1921 թ. նոյեմբերի 16-ին ստորագրեց դեկրետ նոյեմբերի 29-ը Հայաստանի խորհրդայնացման համաժողովրդական տոնի օր հայտարարելու մասին, որտեղ նշվում էր. «Դաշնակների բուրժուա-ազգայնական կառավարության տապալման ու Հայաստանում խորհրդային իշխանության հայտարարման օրը՝ նոյեմբերի 29-ը, հայտարարվում է մեր երկրի բանվորների և գյուղացիների համար համաժողովրդական տոն»¹: Ահա հենց այստեղից է սկսվում նոյեմբերի 29-ը Հայաստանի խորհրդայնացման օր հայտարարելու գործընթացը:

Կարծում ենք՝ չի կարելի անտեսել նոյեմբերի 29-ը, քանի որ հենց այդ օրն ազդարարվեց Կարմիր բանակի զորամասերի և Հայիեղկոմի մուտքը Հայաստանի սահման, բայց ընդունել, որ Հայաստանը խորհրդայնացել է այդ օրը, չենք կարող, որովհետև օրինական իշխանությունը բոլշևիկներին անցավ դեկտեմբերի 2-ին:

Ի տարբերություն խորհրդահայ պատմաբանների՝ դաշնակցական հեղինակները գտնում էին, որ Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել արտաքին ուժերի ճնշման տակ, իսկ խորհրդայնացման օրը համարում էին դեկտեմբերի 2-ը, այլ ոչ նոյեմբերի 29-ը: Այս առիթով Սիմոն Վրացյանը գրել է. «Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցավ 1920 թ. դեկտ[եմբերի] 2-ին, խաղաղ կերպով, Մոսկվայի ներկայացուցիչ Լըգրանի եւ Հայաստանի կառավարութեան միջեւ ստորագրւած համաձայնութեան հետեւանքով, բայց իրենք՝ բոլշևիկները պնդում են, որ խորհրդայնացումը արդիւնք էր յեղափոխութեան եւ խորհրդայնացման օր են հաշւում 1920 թ. նոյ[եմբերի] 29-ը, երբ, իբր թէ, հայ բանւորութիւնն ու գիւղացիութիւնը ապստամբելով՝ տապալեցին Հայաստանի ազգային կառավարութիւնը եւ տեղը հաստատեցին խորհրդային իշխանութիւն»²:

Սփյուռքահայ հեղինակ Գաբրիել Լազյանը նշում է, որ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանը, բանակցությունների մեջ մտնելով դաշնակցական կառավարության հետ, 1920 թ. դեկտեմբերի 2-ին համաձայնագիր ստորագրեց իշխանությունը խաղաղ կերպով բոլշևիկներին փոխան-

¹ Հայկական ՄԽՉ: Օրենքներ և որոշումներ: Հայկական ՄԽՉ դեկրետների և որոշումների հավաքածու, ամսագիր, Երևան, 1921, նոյեմբեր-դեկտեմբեր, թիվ 13, էջ 113:

² Վրացեան Ս., Բնշո՛ւ և ինչպէս խորհրդայնացաւ Հայաստանը, Թեհրան, 1982, էջ 3:

ցելու համար¹: «Մուտ է Հայաստանի խորհրդայնացումը նոյեմբերի 29-ին, քանի որ Լրգրանի դեկտ. 2-ին ստորագրած համաձայնագրով կը պարզուի, որ այդ թուականին իշխանութիւնը դեռ բոլշեւիկներուն ձեռքը չէր գտնուեր»², – գրում է նա:

Ինչ վերաբերում է սփյուռքի ոչ դաշնակցական պատմագրության ներկայացուցիչներին, ապա նրանք Հայաստանի խորհրդայնացման օրվա հարցում միասնական կարծիք չունեն: Օրինակ՝ Սոցիալ դեմոկրատների ֆրակցիայի նախագահ Հ. Ազատյանը նոյեմբերի 29-ը համարում է «աշխատավոր դասակարգերի հեղաշրջման օր», որը, ըստ նրա, կատարվել էր հանուն սոցիալիզմի և շահագործման բոլոր եղանակների վերացման: «Նոյեմբերի 29-ին մեր բանվորն ու գյուղացին ազատվեցին և իրենց վիճակը Հոկտեմբերյան հեղափոխության վիճակի հետ կապելով, փոքրիկ Խորհրդային Հայաստան աշխարհիս ամենագորեղ կապիտալիստական պետությունների հանդեպ անխոցելի դարձրին»³, – գրում է է նա:

Հակադաշնակցական հեղինակ Ս. Բաղդասարյանը գտնում է, որ խորհրդայնացումը փրկության միակ ելքն էր Հայաստանի համար: Նրա կարծիքով՝ եթե անգամ դաշնակցականները նոյեմբերին չհանձնեին իշխանությունը, միևնույնն է, այն անցնելու էր բոլշեւիկներին: Այս առիթով հեղինակը հետևյալ եզրակացությանն է հանգում. «Երկիրը մեծամասնականներին յանձնելու մեջ, ոչ թե դեր է կատարել դաշնակցութեան բարի կամքը, այլ այն ժամանակյա ստեղծած պայմանները մի կողմից, Բիւրօ կառավարութեան առաջարկած վիստ տրամադրութիւնը՝ միւս, իսկ ժողովրդի ռուսասիրութիւնն էլ երրորդ կողմից»⁴: Կարծում ենք՝ ոչ թե օրվա իշխանությունների բարեհաճությունը կամ ժողովրդի ռուսասիրությունը նպաստեց երկրի խորհրդայնացմանը, այլ պարզապես այն, որ դեկտեմբերի սկզբին ուրիշ տարբերակ չկար, Ս. Վրացյանի խոսքերով ասած՝ «մուրճի և սալի» միջև հայտնված հայ ժողովուրդն այլևս անգոր էր դիմակայելու արտաքին՝ ռուսթուրքական ուժի դեմ, ուստի ստիպված ընդունեց խորհրդայնացումը:

Սփյուռքի ոչ դաշնակցական հեղինակ Լևոն Չորմիսյանը խորհրդահայ պատմաբան Բագրատ Բորյանի⁵ նման ևս կարծում է, որ հայ ժողովուրդը թուրք-հայկական պատերազմում կրած պարտության հետևանքով երես թեքեց իր իշխանություններից և առանց որևէ դիմադրության ընդունեց խորհրդային իշխանությունը՝ «ինքնապահպանութեան խորունկ բնագոյ է մը

¹ Տե՛ս **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ դատը. հայ և ռուս յարաբերութիւնների լոյսին տակ, Երևան, 1991, էջ 263:

² Նույն տեղում, էջ 264:

³ **Ազատյան Հ.**, Հայաստանի խորհրդայնացման 6-րդ տարեդարձը, Երևան, 1926, էջ 15:

⁴ **Բաղդասարյան Ս.**, Խորհրդային Հայաստան, պրակ առաջին, Թեհրան, 1927, էջ 8:

⁵ Տե՛ս **Борьян Б.**, Армения, международная дипломатия и СССР, ч. II, Москва-Ленинград, 1929, с. 123:

մղուած»: «1920 թ. նոյեմբերի վերջերը,– գրում է է հեղինակը,– թուրքերու կողմէ ամբողջական կորուստի եւ բնաջնջումի վտանգին տակ գտնուող հայրենիքը, օրուան իշխանաւորներուն իսկ հաճութեամբ սովետական դարձաւ»¹:

Հակադաշնակցական կամ նախկին դաշնակցական հեղինակներ Շ. Նաթալին, Ս. Բարսեղյանը և Թ. Վեհապետյանը հակառակ տեսակետն են զարգացնում՝ գտնելով, որ Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել ոչ թէ նոյեմբերի 29-ին, այլ դեկտեմբերի 2-ին՝ խաղաղ պայմաններում և փոխադարձ համաձայնությամբ²: Մասնավորապէս Շ. Նաթալին գտնում է, որ թուրքական վտանգից հայությանը փրկելու մտահոգությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեկտեմբերի 2-ին իշխանությունը խաղաղ կերպով հանձնեց բոլշևիկներին: «Իշխանութիւնը յանձնողն ալ, ստացողն ալ կը գիտակցէին վտանգի էութիւնը. հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը վեր ամէն քաղաքական ու ընկերային դաւանանքէ: Այլապէս դժուար թէ Դաշնակցութիւնը յանձն առնէր խաղաղ ձեւով իշխանութիւնը յանձնել բոլշևիկներուն»³,– գրում է է հեղինակը:

Սփյուռքահայ հեղինակ Գ. Չալխուշյանը Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ երկու պատճառ է առանձնացնում: Առաջինը նա համարում է աշխարհագրական աննպաստ դրությունը, հարևանների անբարյացակամությունը, տնտեսական պայմանները և ժողովրդի անգիտակցությունը: Որպէս երկրորդ պատճառ հեղինակը դիտում է դաշնակցականներին, որոնք, ըստ նրա, զուրկ էին պետականության զգացումից⁴: Նրա կարծիքով միայն Խորհրդային Ռուսաստանը կարող էր փրկել հայ ժողովրդին, միակ էլքը նա համարում էր այն, որ Ադրբեջանի նման Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամավոր, առանց կռիւի իր դիրքերը զիջեր «մեծամասնականներուն»⁵: Հայաստանի խորհրդայնացման օրվա առիթով սփյուռքահայ հեղինակ Ռ. Հովհաննիսյանը գրում է, որ թէն Հայաստանում և ամբողջ Խորհրդային Միությունում Հայաստանի խորհրդայնացման պաշտոնական և ընդունված միակ օրը նոյեմբերի 29-ն էր համարվում, բայց Հայաստանի Հանրապետությունը ՀՄԽՀ-ի վերածվեց 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրով⁶:

Այսպիսով, Հայաստանի խորհրդայնացման օրվա վերաբերյալ սփյուռ-

¹ **Չորմիսյան Լ.**, Կուսակցությունները, Երևան, 1995, էջ 104:

² Տե՛ս **Շահան**, Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930-ի Կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), հ. Ա, Մարսէլ, 1934, էջ 17, **Բարսեղեան Ս.**, Ինչպէս կը գրեն մեր նորագոյն պատմութիւնը, Պ. Այրեւ, 1948, էջ 59, **Վեհապետեան Թ.**, Նոր սերունդը՝ քաւութեան նոխազ, հ. Բ, Պէրոլթ, 1985, էջ 71:

³ **Շահան**, նշվ. աշխ., էջ 17:

⁴ Տե՛ս **Չալխուշյան Գ.**, Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923, էջ 36-37:

⁵ Նույն տեղում, էջ 37:

⁶ Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Երևան, 2016, էջ 459:

քահայ պատմագրության տեսակետները բաժանվում են մի քանի խմբի: Դաշնակցական պատմագրության ընդհանուր տեսակետն այն էր, որ դա տեղի է ունեցել դեկտեմբերի 2-ին առանց բախման ու երկկողմ փոխհամաձայնության պայմաններում, իսկ ոչ դաշնակցական պատմագրության ներկայացուցիչներն այս հարցի վերաբերյալ չունեն միանշանակ կարծիք: Նրանցից ոմանք գտնում են, որ Հայաստանը խորհրդայնացել է նոյեմբերի 29-ին, իսկ այլք՝ դեկտեմբերի 2-ին:

Անկախության շրջանի պատմագրության մեջ կարծես թե այս հարցը գտել էր իր պատասխանը: Հայաստանի խորհրդայնացման օրվա հարցի պարզաբանմանն այս ժամանակաշրջանում անդրադարձել են Վլադիմիր Ղազախեցյանը, Կարեն Խաչատրյանը, Արարատ Հակոբյանը և ուրիշներ: Վլ. Ղազախեցյանը նշում է, որ Դրո-Սիլին անդրանիկ հրամանով ազդարարվում էր, որ դեկտեմբերի 2-ին, Հայաստանը հռչակվեց խորհրդային, սակայն հայ բոլշևիկները չէին համակերպվում այն մտքի հետ, որ դաշնակցականները իշխանությունը բոլշևիկներին հանձնել են դեկտեմբերի 2-ին և որ հենց դա է Հայաստանի խորհրդայնացման օրը, այլ գտնում էին, որ Հայաստանի խորհրդայնացման օր պետք է ընդունել նոյեմբերի 29-ը: Հեղինակը նշում է, որ Հայաստանի խորհրդայնացման առաջին տարեդարձի նախօրյակին՝ 1921 թ. նոյեմբերի 29-ին, հանրապետության ժողովխորհրդը քննարկում է «նախկին դեկրետներում ու հրամաններում Հայաստանի խորհրդային իշխանության ազդարարման օրը նոյեմբերի 29-ը և ոչ թե դեկտեմբերի 2-ը համարելու մասին» հարցը և ընդունում որոշում՝ Հայաստանում խորհրդային իշխանության հայտարարման օրը դեկտեմբերի 2-ի փոխարեն ընդունել նոյեմբերի 29-ը¹: Նա նշում է, որ հենց այդ ժամանակ Դրո-Սիլինի դեկտեմբերի 2-ի հրամանը հանվում է դեկրետների ժողովածուից: Այդուհանդերձ հեղինակը ճիշտ չի համարում նոյեմբերի 29-ը և դեկտեմբերի 2-ը միմյանց հակադրելը՝ գտնելով, որ այդ երկու իրադարձությունները պատմական իրողություններ են: «Մի դեպքում, Հայհեղկումը ժամանելով Հայաստան, այն հռչակել է Խորհրդային Սոցիալիստական հանրապետություն, իսկ մյուս դեպքում՝ խաղաղ ձևով իշխանությունը հանձնվել է այդ հեղկումին: Այնպես որ նոյեմբերի 29-ը և դեկտեմբերի 2-ը Հայաստանի խորհրդայնացման գործընթացի բաղկացուցիչ տարրերն են»², - գրում է նա:

Կ. Խաչատրյանը ևս, անդրադառնալով Հայաստանի խորհրդայնացման օրվա հարցին, նշում է, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանի համաձայնագրի ստորագրման օրը կողմերը ստորագրում են նաև «Հրաման Հայաստանը խորհրդային հանրապետություն հայտարարելու մասին» փաստաթուղթը, որը հրատարակվում է ՀՍԽՀ դեկրետների ու հրամանների պաշտոնական

¹ Տե՛ս **Ղազախեցյան Վլ.**, Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006, էջ 13:

² Նույն տեղում:

ժողովածուում, սակայն հետագայում հանվում է այդտեղից: Բանն այն է, որ ՀՄԽՀ Ժողկոմխորհի նախագահը Հայաստանի խորհրդայնացման տարեդարձի նախօրեին որոշում է դեկտեմբերի 2-ը՝ որպես Հայաստանի խորհրդայնացման օր, «կողիֆիկացիոն կարգով փոխել» և իբրև «խորհրդային իշխանության ազդարարման օր հայտարարել նոյեմբերի 29-ը»: Ահա հենց այս պատճառով է որոշվում ՀՄԽՀ դեկրետների ու հրամանների ժողովածուից հանել Հայաստանը խորհրդային հայտարարելու մասին դեկտեմբերի 2-ի «Հրամանը»¹: Հեղինակը նշում է, որ Հայաստանի խորհրդային իշխանություններն իրավացիորեն Հայաստանի խորհրդայնացման օրը համարել են դեկտեմբերի 2-ը, այլ ոչ նոյեմբերի 29-ը, ուղղակի «անցյալի հետ բոլոր կապերը պատռելու» գաղափարական խնդիրն է, որ ստիպել է նրանց դեկտեմբերի 2-ը դարձնել պատմության «սպիտակ էջ»: Նոյեմբերի 29-ի «Հռչակագիրը» Կ. Խաչատրյանը դիտում է որպես կուսակցական մի փաստաթուղթ, որով հայ բոլշևիկները հայտարարում էին Հայաստանը խորհրդային հռչակելու և իշխանության դեկր ստանձնելու մասին²: Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ Հայաստանում իշխանափոխությունը տեղի է ունեցել Երևանի համաձայնագրով, թեև այն պարտադրված էր դրսից՝ ուժի դիրքերից, սակայն այն համապատասխանում էր իրավական տարրին³:

Ա. Հակոբյանը ևս այն կարծիքին է, որ Հայաստանի խորհրդայնացման իրավական ձևակերպումը եղել է դեկտեմբերի 2-ին: Նա իրավացիորեն նշում է, որ խորհրդահայ պատմագրության մեջ անտեսվել է այդ համաձայնագիրը, որպեսզի ցույց տրվի, թե Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել «ժողովրդական ապստամբության» միջոցով: Հեղինակը հենց սա է համարում խորհրդային հեղինակների կողմից Հայաստանի խորհրդայնացման օրը նոյեմբերի 29-ը համարելու պատճառը: «Բացի այդ, – գրում է նա, – դեկտեմբերի 2-ի համաձայնագրի մասին խոսելը ցանկալի չէր այն իմաստով, որ բոլշևիկյան քարոզչության տեսակետից թույլատրելի չէր, որ խորհրդային կողմը սեղան նստեր ու բանակցեր «ժողովրդի ոլներին թշնամի ու բանդիտ» դաշնակների հետ»⁴:

Թվում էր, թե անկախության շրջանի պատմագրության մեջ պետք է միասնական կարծիք ձևավորված լիներ Հայաստանի խորհրդայնացման օրվա հարցի շուրջ, բայց այդպես չէ: Ընդհանրապես անկախության հռչակումից հետո հայ պատմագրության մեջ տեղի ունեցան որոշակի տեղաշարժեր: Շատ հիմնախնդիրներ, որոնք խորհրդային իշխանության տարիներին ան-

¹ Տե՛ս **Խաչատրյան Կ.**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007, էջ 43-44:

² Տե՛ս նույն տեղում, էջ 44:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ **Հակոբյան Ա.**, Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում, Երևան, 2016, էջ 57:

տեսված էին ու անմշակ, անկախության հռչակումից հետո մեր պատմաբանների ուշադրությունը սևեռվեց այդ պրոբլեմների վրա, և նորովի լուսաբանվեցին շատ հիմնահարցեր: Պատմաբանների մեծ մասը վերանայեց նախկինում զարգացրած իր տեսակետներն այս կամ այն հիմնահարցերի վերաբերյալ, քանզի կոմունիստական կապանքներից ազատվելու և նորահայտ փաստաթղթերի շրջանառության մեջ մտնելու շնորհիվ հնարավորություն ընձեռնվեց անկողմնակալ ներկայացնել ու գնահատել շատ թեմաներ: Սակայն անկախության հռչակումից հետո ևս կան հեղինակներ, որոնք դարձյալ շարունակում են 1920-ական թվականների պատմագրության ոգուց բխող գրքեր գրել: Նրանցից է Վլադիմիր Պետրոսյանը, որը նորօրյա պատմագրության մեջ շարունակում է զարգացնել խորհրդահայ պատմագրության մեջ լայն տարածում գտած այն թեզը, թե Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել «Հայաստանի աշխատավոր բնակչության կամքով և ցանկությամբ»՝ հիմնադրվել համարելով այն պնդումը, թե դաշնակցական կառավարությունը հոժարակամ է զիջել իշխանությունը բոլշևիկներին: Հեղինակն անկախության շրջանում հրատարակած իր մենագրություններից մեկում կառչած է այն տեսակետին, թե Հայաստանում իշխանափոխությունը տեղի է ունեցել նոյեմբերի 29-ին, այլ ոչ դեկտեմբերի 2-ին¹:

Այսպիսով, անկախության շրջանի հայ պատմագրության մեջ ևս միանշանակ կարծիք Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ չկա, թեև պատմաբանների մեծ մասն ընդունում են, որ Հայաստանում օրինական իշխանափոխությունը տեղի է ունեցել դեկտեմբերի 2-ին:

Արա Ազատյան – Հայաստանի խորհրդայնացման օրվա հարցը հայ պատմագրության մեջ

Հոդվածում ներկայացվում են խորհրդային, հետխորհրդային և սփյուռքյան պատմագրության մեջ Հայաստանի խորհրդայնացման օրվա վերաբերյալ եղած տեսակետներն ու գնահատականները: Այս երեք խմբերը ներկայացնող հեղինակները տարբեր կերպ են լուսաբանել ու գնահատել ինչպես Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցը, այնպես էլ Հայաստանի խորհրդայնացման օրը: Եթե խորհրդահայ պատմագրության մեջ միակարծիք էին Հայաստանի խորհրդայնացման օրը նոյեմբերի 29-ը համարելու հարցում, ապա սփյուռքի և անկախության շրջանի պատմագրության մեջ չկա ընդհանուր տեսակետ: Հոդվածում այդ տեսակետներն ու գնահատականները ներկայացնելուց զատ՝ փորձ է արվում նաև պարզաբանել Հայաստանի խորհրդայնացման օրվա շուրջ ստեղծված խառնաշփոթը:

¹ Տե՛ս **Պետրոսյան Վ.**, Հայկական հարց, հ. 2, Երևան, 2016, էջ 444-450:

Արա Ազատյան – *Вопрос о дне советизации Армении в армянской историографии*

Ключевые слова – советизация Армении, день советизации, историография, консенсус, диаспора, независимость, путаница

В статье представлены взгляды и оценка советской, постсоветской и диаспорской историографии относительно дня советизации Армении. Авторы, представляющие эти три группы, рассмотрели вопрос как о советизации, так и о дне советизации Армении, а также дали этим событиям оценку. Если в советско-армянской историографии существовал консенсус относительно признания 29 ноября днем советизации Армении, то в историографии диаспоры и периода независимости единого мнения относительно этого вопроса нет. Помимо представления этих взглядов и оценок в статье, мы также попытались прояснить путаницу, возникшую вокруг дня советизации Армении.

Ara Azatyan – *The Issue of the Day of Sovietization of Armenia in Armenian Historiography*

Key Words – sovietization of Armenia, sovietization day, historiography, independence, evaluations, opinions, assessments

The article presents the opinions and assessments of the day of sovietization of Armenia in Soviet, Post-Soviet and Diasporian historiography. The authors representing these three groups have covered and assessed both the issue of the sovietization of Armenia and the day of the sovietization of Armenia. While there was a consensus in Soviet-Armenian historiography on considering November 29 as the day of Armenia's sovietization, there is no such common opinion in the historiography of the Diaspora and the period of independence. In addition to presenting these views and evaluations in the article, we have also tried to clarify the confusion created around the day of Armenia's sovietization.

Ներկայացվել է 08.06.2021

Գրախոսվել է 21.06.2021

Ընդունվել է տպագրության 06.07.2021